«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Ազգային տոների, ծեսերի կազմակերպման առանձնահատկությունները կրթական գործընթացում:

Դաստիարակ՝ Մինասյան Ալետա Արտուշի

Մանկապարտեզ՝ «Մանկիկ» մանկապարտեզ ՀՈԱԿ

ԳՅՈՒՄՐԻ 2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 3

ԳԼՈՒԽ 1

ԱԶԳԱՅԻՆ, ԾԻՍԱԿԱՆ, ՇԱՐԺՈՒՆ ԽԱՂԵՐ

1.1 Ազգային ծեսը մանկան ընդհանուր զարգացման միջոց 5

1.2 Ծեսը, ծիսակարգը և սովորույթը, դրանց դերն ու նշանակությունը 6

1.3 Ազգային խաղեր 7

ԳԼՈՒԽ 2

ԲԱՐԵԿԵՆԴԱՆԸ ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆՈՒՄ

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

2.1 Բարեկենդան 12

2.2 Նախագիծ «Բարեկենդանը նախակրթարանում» 15

Եզրակացություն 17

Օգտագործված գրականություն 18

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Աշխատանքի արդիականությունը: Ազգային մշակույթի յուրացումը դրված է նախակրթարանի ծրագրի հիմքում, այս դեպքում ազգային ծեսերի իրականացումը դառնում է յուրացման համար հենակետերից մեկը, քանի որ այն արդյունավետ և նոր կազմակերպման ձևերից է: Աշխատանքն արդիական է, քանզի սանը պետք է երգի ազգային երգ, ունկնդրի ազգային երաժշտություն, խաղա ազգային, ծիսական խաղեր:

Աշխատանքի նպատակը: Հետազոտական աշխատանքի նպատակն է ուսումնասիրել երեխայի խոսքի և հաղորդակցության զարգացման կարևորությունը նախադպրոցական տարիքում, ինչպես նաև գործնական փորձարկման միջոցով ցույց տալ ազգային տոներին ու ծեսերին՝ երեխային մասնակից դարձնելով նրա խոսքի և հաղորդակցական կարողությունների զարգացման հնարավորությունները:

Նախակրթարանում սանի համար ազգային ծեսի ճանաչման ամենաարդյունավետ ձևը խաղն է, այդպես ավելի տպավորիչ ու հասանելի է, հասկանալի, գործնական: Նախակրթարանում գործունեության հիմնական ձևերը իրականացվում են խաղի միջոցով: Խաղը զարգացնում է երեխայի ուշադրությունը, հիշողությունը, երևակայությունը, ստեղծագործելու կարողությունը, հաղորդակցման (կոմունիկատիվ) կարողությունը, շարժողականությունը, ակտիվությունը, վարքի կամածինությունը, ընկալումը, շոշափելու, ուսումնասիրելու, իր դիտողությունները հաղորդելու կարողությունը, երևույթների մեջ կապ գտնելու կարողությունը, ճիշտ կողմնորոշվելու կարողությունը, շարժումներին տիրապետելու կարողությունը, լսելու կարողությունը, դիտելու և կրկնելու կարողությունը, ինքնատիրապետումը, ինքնուրույն աշխատելու կարողությունը, վերլուծելու, համադրելու կարողությունը, հարստացնում է բառապաշարը:

Ծիսական խաղերը, բացի հետաքրքիր ու տպավորիչ լինելուց, զարգացնում են մանր և խոշոր մկանային մոտորիկան, ընդհանուր շարժումային համակարգը, դրանք թատրոնի նման սինթետիկ արվեստ են դառնում, որոնք ինտեգրում են ինչպես երեխայի զագացման բոլոր ոլորտները, այնպես էլ գոծունեության տարբեր ձևերը: Ամենամեծ ու ամենացանկալի նորամուծությունը կրթության ասպարեզում այսօր այն կլինի, որ ինչ-ինչ պատճառներով իր արմատներից հեռացած ժողովրդին վերադարձվի իր իսկ ստեղծածը:

Ազգային տոների, ծեսերի կազմակերպման առանձնահատկությունները կրթական գործընթացում հետզոտության իրականացման համար առաջադրվել են **նպատակից բխող հետևյալ խնդիրները.**

- **Ուսումնասիրել** նախադպրոցական տարիքի երեխաների խոսքի և հաղորդակցական կարողությունների առանձնահատկությունները, դրանց զարգացման մեթոդական սկզբունքները,
- **Ընտրել** և նախադպրոցական խմբերում **փորձարկել** ազգային տոների, ծեսերի և ծիսական գործունեության ընթացքում երեխայի խոսքի և սոցիալական հմտությունների զարգացմանը նպաստող գործունեություն, խաղեր, երգ-պարեր և այլն:

Հայ մեծագույն մանկավարժները ամենամեծ դպրոցը համարել են ժողովրդական դպրոցը և իրենց ստեղծած կրթական համակարգը փորձել են մոտեցնել ժողովրդական դպրոցին, որովհետև վերջինս առավելագույն արդյունքների հասել է բնության թելադրած պարզագույն միջոցներով:

ԳԼՈՒԽ 1

ԱԶԳԱՅԻՆ, ԾԻՍԱԿԱՆ, ՇԱՐԺՈՒՆ ԽԱՂԵՐ

1.1 Ազգային ծեսը մանկան ընդհանուր զարգացման միջոց

Ազգային ծեսն այն միջավայրն է, որտեղ բոլորը, ազգի մշակույթը յուրացրած, ինքնադրսևորվելու, ստեղծագործելու, որոնելու, հայտնաբերելու, երևակայելու, իմացածը կիրառելու լայն հնարավորություն ունեն: Այն մանկան ընդհանուր զարգացման համար ստեղծում է պարարտ հող՝ մի շարք խնդիրների լուծման համար:

Բնության մեջ ապրող երեխան ճարպիկ է, գործունյա, անվախ, ուժեղ, խելացի, սրամիտ, համարձակ, որովհետև միայն այդպիսի հատկություններ ունեցողը կարող է ոչ միայն գոյատևել այդ միջավայրում, այլև լիարժեք անդամը լինել, մասնակից լինել միջավայրի ինչպես ամենօրյա գործունեությանը, այնպես էլ իր անձնային հետաքրքիր որակներով այն փոխել, զարգացնել: Խաղի միջոցով լուծվում են խնդիրներ, որոնք կյանքը դնում է մանկան թե՛ ֆիզիկական, թե՛ մտավոր, թե՛ հոգևոր զարգացման ընթացքի վրա: Հենց այս պատճառով էլ խաղը դառնում է ծիսական միջավայրում ներառվելու միջոց: Ամեն տարիք իր չափով է ներառվում այդ գործընթացին, խաղում իր տարիքին բնորոշ հմտությամբ: Զարգանում է իրավիճակն ըմբռնելու կարողությունը, մտքի ճկունությունը, երևակայությունը, հիշողությունը, ուշադրությունը, կամքը, մկանների լարումը, ինքնուրույն աշխատելու, վերլուծելու, համադրելու, շոշափելու, ուսումնասիրելու, իր դիտողությունները հաղորդելու կարողությունը, երևույթների մեջ կապ գտնելու, ճիշտ կողմնորոշվելու, շարժումներին տիրապետելու կարողությունը, հարստացնում է բառապաշարը և այլն: Ազգային ծեսերի խաղարկման մեջ մանուկը հիմնականում կարող է ընդգրկվել իր տարիքին համապատասխան ծիսական գործողություններ կատարելով, ծիսական և մանկական խաղեր խաղալով: Ծեսն ամբողջությամբ իմանալու, ըմբռնելու և իրենը դարձնելու համար հարկավոր է անպայման մասնակից լինել, ներառվել նախապատրաստման գործընթացին, ծիսական միջավայրի ստեղծմանը, միասին պատրաստել ծիսական պարագաներ, ծիսական կերակուրներ, սովորել ծիսական ազգային երգեր, պարեր, ծեսի խաղարկման ընթացքում իմանալ իր դերը,

գործողությունների այն բաժինը, որն իրենն է: Իսկ մեծերն էլ պետք է իմանան, որ այդ ամենը հավասարապես հարկավոր է բոլորին, ըստ այդմ էլ՝ բոլորը հավասար մասնակից են՝ իրենց կարողությունների սահմաններում: Այս դեպքում մանուկը, ինչպես նաև մեծը, կլինի ծեսն իմացող, կրող, փոխանցող: Շատ կարևոր է այս ամենը ներմուծել ընտանեկան միջավայր, որտեղ սիրելի, հարազատ մարդկանց հետ մանուկը ավելի վստահ, համարձակ ու ազատ կգործի՝ ժառանգելով ամենակարևորը՝ ազգային մշակութային արժեքները:

1.2 Ծեսը, ծիսակարգը և սովորույթը, դրանց դերն ու նշանակությունը

Մշակույթը չէր պահպանվի և սերնդեսերունդ չէր փոխանցվի, եթե գոյություն չունենային դրան նպաստող որոշակի միջոցներն ու հանգամանքները: Դրանցից կարող ենք առանձնացնել պատմության ընթացքում ձևավորված ծեսերը:

Ծեսը ավանդական, կամ սահմանված կանոններով կատարվող կրոնական արարողություն է, որին հավատացյալները վերագրում են մոգական և խորհրդավոր հատկություններ: Ծեսը լայն տարածում ունի հավատալիքներում, կրոնում, կենցաղում, մարդկային հարաբերություններում և այլուր: Ծեսը խորհրդանշական ձևերով վերարտադրում է նաև ժողովրդի անցյալի կարևոր փուլում կատարված իրադարձությունները և դրանց միջոցով ապահովում ազգի, հասարակության միասնականությունն ու հարատևությունը:

Ծես նշանակում է նվիրում, ընտելացում տվյալ կրոնին և արժեքների համակարգին, ազգութանը, պետությանը: Ծեսերն աչքի են ընկնում իրենց պատմական և ճանաչողական արժեքներով: Դրանք ստեղծվում են ոչ թե պատահական դեպքերի շուրջ, այլ ժողովրդի համար կենսական նշանակություն ունեցող իրադարձությունների կապակցությամբ: Ծեսերի շնորհիվ պահպանվել և դարեդար են փոխանցվել ազգային կյանքի բոլոր էական կողմերը, արտացոլել էթնոսին բնորոշ առանձնահատկությունները: Դարերի ընթացքում հարատևած ծեսերի բովանդակությունն իր բազմակողմանի ազդեցությունն է ունեցել այդ էթնոսի առօրյա կյանքի, կենցաղի, հոգեբանության և աշխարհայացքի վրա: Եթե մշակույթի ժառանգորդման առաջին ձևը համարենք ծեսը, ապա երկրորդը ծիսակարգն է: Այն

ներառում է ավանդական գործողություններ, որոնք ուղեկցում են մարդուն, հանրությանը կյանքի և գործունեության կարևոր պահերին:

Ծիսակարգը մարմնավորում է մարդկանց վարքի տարբեր կողմերը: Եթե սովորույթը մարմնավորում է ամենօրյա վարքային նորմերը, ապա ծիսակարգին դիմում են միայն արտակարգ, ոչ ամենօրյա իրավիճակներում (ծնունդ, կնունք, պսակադրություն, մահ, և այլն):

Մշակույթի ժառանգականության փոխանցման մյուս ավանդական ձևը սովորույթն է: Սովորույթը վարքի կարծրատիպացված միջոցն է, որը վերարտադրվում է որոշակի հասարակությունում կամ սոցիալական խմբում և սովորական է նրա անդամների համար: Սովորույթները կենցաղի պահպանված սովորական մասն են, ծեսերի և ծիսակարգերի բեկորները, որոնք կորցրել են իրենց առաջնային նշանակությունը, բայց պահպանել են մարդկանց միավորելու գործառույթն ամենօրյա ընդունված նորմերով: Սովորույթը նաև կենցաղում վարքի կարգավորիչ է, որը աստիճանաբար դարձել է ավանդույթ: Սովորույթի կայունությունը, նրա դիմադրողականությունը, փոփոխություններն այդքան մեծ են այն պատճառով, որ նրանք միշտ ձևավորվում են հասարակությունում և ընդունված են նրա կողմից որպես «ստիպողական պահանջ»:

1.3 Ազգային խաղեր

Մամի, մամի, խաղողը հասե՞լ է

Երեխաները բռնում են միմյանց ձեռքից և ուղիղ գծով կանգնում: Շարքի վերջում կանգնածներից մեկը մյուսին հարցնում է.

— Մամի, մամի, խաղողը հասե՞լ է:

Մյուսը պատասխանում է.

— Հասել է, հասմըսել է,

Շանը կտամ, գելին կտամ,

Քեզ մի ճուր չեմ տա:

— Ինչո՞վ գամ՝ որ տաս:

— Դհոլ-զուռնով:

Հարցնողն իր խմբով, դհոլի և զուռնայի ձայներին նմանեցնելով, որևէ երաժշտություն «նվագելով», շարքի առջևից գալիս և անցնում է պատասխանողի և նրա կողքին

կանգնածի թևերի տակով: Երբ շարքը նորից շարվում է իր նախկին դիրքով, պատասխանողի կողքին կանգնածի դիրքը փոխվում է: Նրա ձեռքերը խաչված են, իսկ ինքը՝ շրջված հակառակ կողմ: Երկխոսությունը կրկնվում է մի քանի անգամ: Յուրաքանչյուր երկխոսության վերջում հանձնարարությունը տարբեր է լինում՝ ձիով, մեքենայով, թռչկոտելով, մի ոտքով թռնելով, ավանակով, հաց ուտելով (հա՜մ, հա՜մ, հա՜մ, հա՜մ,) երգելով, գնացքով, զմփիկով, նապաստակի նման ցատկելով և այլն: Ամեն անգամ անցնում են արդեն շրջվածի և կողքին կանգնածի բռնած ձեռքերի տակով: Երբ անցնում են վերջին զույգի թևերի տակով, պատասխանողն ասում է.

- Մամին կասի՝ սխտոր ծեծեք:

Շարքը, բաց չթողնելով ձեռքերը, ռիթմիկ թռիչքներ է կատարում՝ բացականչելով.

— Չը՜խկ, չը՜խկ, չը՜խկ, չը՜խկ:

— Մամին կասի՝ լվացք ենք արել, պարանը կարճ է:

— Քաշենք՝ երկարի:

Երկու կողմից խաղավարները, որոնց կողմից է շարքի կեսը, նրանց հետ քաշում են այնքան, մինչև մեջտեղի կամ որևէ զույգի ձեռքեր իրարից բաժանվեն:

Նանի – նանի

ա. Խաղում են երկուսով: Խաղացողներից մեկը ձեռքերի մատները մի փոքր իրարից հեռացրած, ձեռքերի մատների ծայրերը պահում են իրար դիմաց և հպում իրար՝ պատկերելով թոնրի ձև: Մյուսը, ցուցամատը դնելով դիմացի խաղընկերոջ ճկույթների միացման տեղին, ասում է.

— Նանի, նանի, կրակ տուր:

— Ելի վերի թաղը (թարեքը, թառը):

Այսպես կրկնվում է՝ բարձրանալով մինչև ցուցամատ: Հասնելով ցուցամատին (թոնրի շրթին), ասում է.

— Նանի, նանի, որ կաթը դնեմ թոնիրը՝ տաքանա, հո շուն չկա՞:

— Չկա, չկա:

Խաղացողը ձեռքը՝ իբրև կաթ, իջեցնում է «թոնիրը»: Թոնիրը ցուցադրող երեխան արագ փակում է թոնիրը՝ ասելով.

— Հաֆ, հաֆ, հաֆ…

բ. Նույն խաղում են, վերջում ասելով.

— Հաց որ թխեմ՝ հո շուն չկա՞:

— Չկա, չկա:

«Հաց թխողը» ծափ է տալիս և աջ ձեռքով «հացը խփում» թոնրի աջ շրթին: Նույնը կատարում է՝ խփելով ձախ շրթին: «Թոնիրը», որսալով հարմար պահ, արագ փակվում է՝ բռնելով խաղացողի ձեռքը և ասում.

— Հաֆ, հաֆ, հաֆ:

գ. — Նանե, նանե, կրակ տուր:

— Ելի վերի թաղեն:

— Հուդա ճնճուղ մի կար, ի՞նչ էղավ.

— Թռավ դիզու գլոխ.

— Դեզն ի՞նչ էղավ.

— Կով կերավ.

— Կովն ի՞նչ էղավ.

— Գել կերավ.

— Գելն ի՞նչ էղավ.

— Շուն կերավ.

— Շունն ի՞նչ էղավ.

— Դռան ետև կապուկ է.

— Խաց օր էպիկ, խո չխա՞ծե.

— Չէ, էպե.

— Կաթն օր դնիմ թունդիր, խո չթա՞փի.

— Նանե, նանե, կաթը թափավ:

Խնոցին հա հարեմ

- Խաղում են զույգերով: Երեխաներից մեկը թեթևակի շալակում է մյուսին ու, գոտկատողից վերև ընկած հատվածով ռիթմիկ առաջ ու հետ շարժում կատարելով, ասում.

— Խնոցին

հահարեմ,

Շալակեմ՝ սար հանեմ,

— Խնոցին հա հարեմ ,

Շալակեմ՝ գետն անցնեմ,

— Խնոցին հա հարեմ,

Շալակեմ՝ դաշտ տանեմ,

— Խնոցին հա հարեմ,

Կաթ ու մածուն կերցնեմ:

Կարելի է նույնն անել՝ ասելով.

-Խնոցի, հարոցի, թանը՝ քեզ, կարագը՝ մեզ:

«Ջրաղաց»

Երեխաներից մի քանիսը դառնում են ջրաղացի պտտվող անիվ, որին պտտում է ջուրը(նույն քանակով երեխաներ, որոնցից յուրաքանչյուրը բռնում է անիվ դարձած երեխաներից մեկի ձեռքից) և, թեթև, ռիթմիկ քայլերով պտտվելով, ռիթմիկ վանկարկում. «Գառ, գոռ, գուռ»: Երեխաներից մի քանիսը դառնում են ջրաղացի քար: Երբ անիվն սկսում է պտտվել, ջրաղացի քար դարձած երեխաները, ձեռքերն իրար ուսի վրա դրած, պտտվում են ու ռիթմիկ վանկարկում. «Չախկ, չոխկ, չուխկ»՝ միաժամանակ հարվածելով ոտքերով: Քիչ անց ջրերն ու անիվը դառնում են ցորեն և մոտենում ջրաղացքարին: Վերջինս տեղում կանգնելով և շարունակելով վանկարկումը, մի տեղ է բացում ցորենի համար: Ցորենը, վանկարկելով՝ «Թափ, թոփ, թուփ», մտնում է շրջանի մեջ: Ջրաղացքարը միանում և շարունակում է պտտվել: «Ցորեն» երեխաները ցուցադրում են ցորենի աղալը՝ անկանոն թռչկոտելով, զմփիկներով և այլն: Քիչ անց քարը նորից կանգնում է՝ չդադարեցնելով վանկարկումն ու քայլքը: Այս անգամ, վանկարկելով՝ «Փառ, փոռ, փուռ», դուրս է «թափվում» ալյուրը: Խաղի ընթացքում կարող են օգտագործվել համապատասխան հնչողությամբ հարվածայիններ կամ շրխկաններ: Ջրաղացի անիվի շարժումը ցուցադրելու համար երկուսով կանգնում են դեմ դիմաց, ձեռքերը հագուցում իրար և շրջանաձև պտտում մեկ՝ դեպի իրեն, մեկ՝ դեպի դիմացինը: Կարելի է նաև ձեռքերը հերթով պտտել՝ նախ աջը, հետո ձախը (մեկ՝ դեպի իրեն, մեկ՝ դեպի դիմացինը):

Կարմիր կոճակ

Երեխաները նստում են աթոռներին, ձեռքերը մեկնում են առաջ՝ ափերն իրար կպցրած: Խաղավարը իր ափի մեջ թաքցնում է կարմիր կոճակը, մոտենում է յուրաքանչյուր երեխայի ու նրա ափի մեջ մտցնելով իր ձեռքերը՝ կոճակը թաքուն գցում է երեխաներից մեկի ձեռքերի մեջ: Ընթացքում կարող է որևէ խաղերգ արտասանել: Վերջացնելուց հետո ասում է.

— Կարմի՛ր կոճակ, դո՛ւրս արի:

Այսպիսով, մշակույթի փոխանցման ձևերի մեջ կարևոր դեր ունեն ազգային խաղեը: Աշխարհում շատ ու շատ ժողովուրդներ կրոնական, քաղաքական, գաղափարախոսական համակարգերի փոփոխություններից հետո իրենց ծեսերը, այնուամենայնիվ, շարունակում են կատարել: Ժողովրդական ծեսը ծրագրված երևույթ չէ, այն ժողովրդի հավաքական և տևական ստեղծագործության արդյունք է, անընդհատ փոփոխությունների ենթակա, բայց միաժամանակ հիմնական բաղադրիչներով խիստ պաղպանողական:

Հայկական ծեսերը շատ հարուստ երգեր ու պարեր ունեն: Երգերի բովանդակությունը միշտ համապատասխանում է տվյալ ծեսի իմաստին, իսկ ծեսերին բնորոշ ուտելիքները, խնջույքները, տոնական հագուստը, նվերները ունեն իրենց առանձնահատկությունները: Դրանք բոլոր տոներում են առկա: Ոչ մեկն ինքնանպատակ չէ: Խնջույքները չեն կազմակերպվում ուտել-խմելու համար, յուրաքանչյուր ծեսին կազմակերպվող խնջույք պետք է համապատասխանի տվյալ ծեսի իմաստին, ըստ որի համապատասխանեցման համար էլ ընտրվում է ծեսը կազմակերպելու վայրը, ժամը, մասնակիցները, ուտեստների տեսակները:

Հանդես գալով որպես հասարակական կյանքի հոգևոր ոլորտի խտացումներ՝ ծեսերը, սովորույթները անգնահատելի դեր ունեն՝ յուրովի լրացնելով ավանդույթի ընդհանուր կառույցի առանձին կողմերը, որի շնորհիվ ավանդույթը դառնում է միասնական և ներդաշնակ մի ամբողջություն: Դրանցում ժողովուրդը հանդես է գալիս և՛ որպես ստեղծագործ, և՛ որպես գործիչ, և՛ որպես քննադատ:

ԳԼՈՒԽ 2

ԲԱՐԵԿԵՆԴԱՆԸ ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆՈՒՄ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

2.1 Բարեկենդան

Ահա եկավ հայոց ազգին օրերը,
Հանեցեք հիները, հագեք նորերը:
Բարեկենդան, փորեկենդան,
Բարեկենդան օրեր է,
Խելքս գլխես կորեր է…
Մե օր բարեկենդան, տաս օր անոթի:

Բարեկենդան նշանակում է բարի կենդանություն: Այն ուրախության ու զվարճանքի օր է, հիշեցնում է Ադամի և Եվայի դրախտային կյանքը, երբ նրանք ապրում էին վայելքի ու անհոգության մեջ: Տոնը հավանաբար կապ ուներ գարնան սկսվելու հետ: Մարդիկ մաղթում էին միմյանց բարի կենդանություն: Հետագայում քրիստոնեությունը հարմարեցրեց իրեն և դարձրեց Մեծ Պահքի նախորդող շաբաթվա տոն, որը նշվում էր կերուխումով, մասսայական խաղերով, մրցումներով, թատերախաղերով, պարերով և այլն: Այն տևում էր երկու շաբաթ, անմիջականորեն հաջորդելով Ս. Սարգսին և ավարտվելով Մեծ պասով: Մեծ պահքին նախորդող կիրակին Բուն Բարեկենդանի օրն էր: Պահքի կարևոր լինելը մարդկանց ցույց է տվել Քրիստոսը: Նա անապատում 40 օր է անցկացրել: Մարդիկ Հիսուս Քրիստոսի օրինակով են պահում Մեծ պահքը: Մեծ պահքի 40 օրերին գումարվել է նաև Զատիկին նախորդող 9 օրերը, և այն տևում է 49 օր: Մեծ պահքն ավարտվում է Զատիկի՝ Քրիստոսի Հարության տոնով: Բարեկենդանն այնքան սիրված, ժողովրդական, սպասված տոն էր, որ հայ ազգի կողմից այն ընկալվում էր որպես ամենաազգային, ինչպես նաև ամենաերջանկաբեր, խրախճանք, ճոխ ու առատ ուտելիքներ վայելելու տոն, պարերի, խաղերի, զվարճահանդեսների, թատերախաղերի, այցելությունների և ուրախության երկու շաբաթ: Այդ օրերին թույլատրվում էր առատ ուտելիք, կերուխում:

Բարեկենդանի երգ՝ Գնացեք, տեսեք

Գնացեք, տեսեք՝ ո՞վ է կերել այծը.
- Գնացին տեսան՝ գայլն է կերել այծը:
Գայլն ու այծը,
Այծն ու գայլը.
Ձեզ՝ Բարեկենդան,
Մեզ՝ բարի Զատիկ:
Գնացեք, տեսեք՝ ո՞վ է կերել գայլը.
- Գնացին տեսան՝ արջն է կերել գայլը:
Արջն ու գայլը,
Գայլն ու այծը.
Ձեզ՝ Բարեկենդան,
Մեզ՝ բարի Զատիկ:
Գնացեք, տեսեք՝ ո՞վ է կերել արջը.
- Գնացին տեսան՝ թուրն է կերել արջը:
Թուրն ու արջը,
Արջն ու գայլը,
Գայլն ու այծը.
Ձեզ՝ Բարեկենդան,
Մեզ՝ բարի Զատիկ:
Գնացեք, տեսեք՝ ո՞վ է կերել թուրը.
- Գնացին տեսան՝ ժանգն է կերել թուրը:
Ժանգն ու թուրը,
Թուրն ու արջը,
Արջն ու գայլը,
Գայլն ու այծը.
Ձեզ՝ Բարեկենդան,
Մեզ՝ բարի Զատիկ:
Գնացեք, տեսեք՝ ո՞վ է կերել ժանգը.
- Գնացին տեսան՝ հողն է կերել ժանգը:
Հողն ու ժանգը,
Ժանգն ու թուրը,
Թուրն ու արջը,
Արջն ու գայլը,
Գայլն ու այծը.
Ձեզ՝ Բարեկենդան,
Մեզ՝ բարի Զատիկ

Տիկնիկներ

Բարեկենդանի անբաժան մասն են Ուտիս տատը և Պաս պապը կամ Ակլատիզը։ Ուտիս տատը համարվում էր Բարեկենդանի, այսինքն՝ ճոխ կերակուրների հովանավոր տիկնիկը և մտցվում էր հրապարակ՝ մարդկանց խրախճանքի հրավիրելու։ Երեկոյան, երբ խրախճանքը հասնում էր գագաթնակետին, տղաները դուրս էին գալիս ձիարշավի, որն էլ ավարտվում էր Ուտիս տատի հրապարակից դուրս վռնդելու արարողությամբ։ Ուտիս տատը, որը Բարեկենդանի օրերին բոլորին կերուխումի էր հրավիրում, արդեն քրքրված տիկնիկ էր։ Իսկ Բարեկենդանի վերջին օրը՝ Բուն Բարեկենդանին, Ուտիս տատին հանդիսավոր կերպով գլորում էին սարի գլխից։

Բարեկենդանի ակլատիզը

Հրապարակ է մտցվում Պաս պապը կամ Ակլատիզը, որը Պահքի հովանավոր տիկնիկն էր։ Վերջինս պատրաստում էին սոխից կամ կարտոֆիլից և մեջը խրում յոթ փետուր, ապա՝ զգեստավորում։ Այն առաստաղից կախելիս երգում ենք՝

Տատը գնաց շերեփը ձեռին,
Պապը եկավ չոմբախն ուսին։
Ակլատիզ, չվանը վիզ
Եկավ մեզ հյուր՝ կախվավ երդիս։

Յոթ փետուրները խորհրդանշում էին Մեծ Պահքի 7 շաբաթը։ Յուրաքանչյուր շաբաթվա վերջում պոկում էին մեկ փետուր։ Հաճախ փետուրը պոկելն ուղեկցվում էր հատուկ երգերով։

Ճիճու, ճիճվարանքը՝ դուրս,
ցորեն, գարին՝ ներս։

Այս խոսքերից հետո փետուրը ջարդում էին և մի կողմ նետում։

Ակլատիզը կատարում էր Մեծ Պահքը հսկողի դերը։ Դրանով հաճախ վախեցնում էին երեխաներին, որ վերջիններս չգայթակղվեին Ուտիս տատի կերակուրներով։

Ուրախ պարերը բարեկենդանի անբաժան մասն են։ Երեխաները պարում են զուռնա-դհոլի և նվագակցության տակ՝ յալլի տալու և զոփի տալու պարերը, որոնք սովորել են հաճույքով և շարժումները յուրացրել են սիրով։

2.2 Նախագիծ «Բարեկենդանը նախակրթարանում»

Նպատակ

Ազգային ծիսական ավանդույթների փոխանցում

Խնդիր

- ազգային ծիսական երգերի, խաղերգերի ընտրություն,
- ծիսական խաղերի ուսուցում,
- ազգային պարային երաժշտության ուղեկցությամբ կատակ խաղ-պարերի կատարում,
- Բարեկենդանի ներկայացումների երաժշտական ձևավորում:

Ընթացք

Ընտրել և ուսուցանել Բարեկենդանի ծիսական երգեր: Դասվարի, դաստիարակի ներկայացրած նյութի հիման վրա ընտրել ազգային, ծիսական երգեր, պարեղանակներ, պարերգեր, խաղերգեր՝ կատարելով երաժշտական ձևավորում: Խաղալ ազգային ծիսական խաղեր, որոնք հիմնականում կուղեկցվեն ազգային պարեղանակներով: Համապատասխան երաժշտության ուղեկցությամբ բեմականացնել կատակ-պարեր՝ օգտագործելով պարային շարժումներ, թաշկինակներ, ձեռագործ տիկնիկներ:

- Ազգային պարային երաժշտության ուղեկցությամբ կատակ խաղ-պարերի կատարում,
- Բարեկենդանի ներկայացումների երաժշտական ձևավորում:

Արդյունք

Սաները, կիմանան՝

- ինչ է ազգային ծեսը,
- կկարողանան կատարել ծիսական երգեր, պարեր, խաղերգեր,
- կլինեն ազգային մշակույթը կրող, փոխանցող:

Ամփոփում՝

Իրականացնելով բարեկենդանի տոնը նախակրթարանում՝ համոզվեցինք, որ իրոք ծեսը կարևոր նախապայման ու հարմար միջավայր է երեխայի խոսքի զարգացման ու հաղորդակցման համար:

Ծեսի կազմակերպման ընթացքում նրանք խոսում և հաղորդակցվում են անկաշկանդ, փոխանակում մտքեր ու կարծիքներ, պատմում շրջապատից լսած տեղեկություններ ու տալիս մեկնաբանություններ:

Նաև համոզվեցինք, որ ծիսական երգն ու պարը դրական ձևով ազդեցին երեխայի սոցիալական, հուզական ու մտավոր զարգացման վրա:

Կշռադատման փուլ

Բարեկենդանի միջոցառման արդյունքում սանեը ըմբռնեցին ծեսի նշանակությունը և կարևորությունը, հարստացրին իրենց գիտելիքները ազգային տոնի մասին: Ծիսական խաղեր կազմակերպելիս նրանք ունեցան զգացմունքային տարբեր դրսևորումներ:

Երեխաները սիրով էին սովորում և երգում ծիսական երգերը: Երգի հետ զուգընթաց նաև խաղում էին: Սա երեխաների մոտ ձևավորեց որոշակի երաժշտական ճաշակ՝ նրանց մոտեցնելով հայ մշակույթի արմատներին: Նրանք հեշտորեն կարողացան յուրացնել ազգային երգն ու պարը՝ դրանց միջոցով արտահայտելով իրենց զգացմունքները: Երեխաները ավելի սիրով և ուշադրությամբ սկսեցին սովորել, երբ իմացան, որ այդ երգերը երգել են իրենց մեծ պապիկներն ու տատիկները:

Տնօրենը և դաստիարակները դիտելով պարապմունքը, եկան այն եզրահանգման, որ

- երեխաներին մեծ հաճույք էին պատճառում խմբակային և երկխոսության տեսքով կազմակերպված երգ-խաղերը:
- Ծիսական երգ ու երաժշտությամբ ողողված այս ջերմ մթնոլորտը մեծ ազդեցություն գործեց երեխայի խոսքի զարագացման բոլոր ասպեկտների վրա: Նրանք պատմեցին, մեկնաբանեցին, համեմատեցին, թե ինչը ինչպես են անում իրենց ընտանիքի մեծերը:
- Սովորույթ դարձած ծեսերի միջոցով զարգացավ սանի ստեղծագործելու ունակությունը, երևակայությունը, ուշադրությունը, հիշողությունը, շարժունակությունը, վարքը, ակտիվությունը, անկաշկանդվածությունը, ինքնուրույնությունը, ճանաչողությունը և մի շարք այլ հմտություններ ու կարողություններ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, հետազոտական աշխատանքի կատարման, տեսական գրականության ուսումնասիրության և վերլուծության, մշակված ծեսերի իրականացման արդյունքում եկանք մի շարք եզրահանգումների.

- Նախակրթարանում երեխայի ներդաշնակ հոգևոր զարգացման կարևոր խնդիրներից մեկը ազգային մշակույթի յուրացումն է՝ ծեսեր, տոներ:
- Ծեսերը և ծիսական գործողություններն այս տարիքում երեխաների կողմից ընկալվում են որպես խաղ, դերախաղ:
- Ազգային ծեսերն ու տոները երեխայի ընտանիքի և համայնքի կյանքի կարևոր ու պարբերաբար կրկնվող երևույթներն են: Երեխան դրանց առնչվում է նույնիսկ մինչև մանկապարտեզ գալը և անկախ դրանից:
- Ծեսերի ամբողջական իրականացումը ինքնին կարելի է համարել խաղ, որոնք նույնպես նպաստում են երեխայի խոսքի զարգացման հարցմանը:
- Ծեսն այն միջավայրն է, որը երեխային տալիս է հնարավորություն խաղալ ազատ կամ ունենալ դերային խաղեր: Ազատ խաղը երեխային տալիս է ինքնադրսևորվելու հնարավորություն:

Այսպիսով, ծեսն այն միջավայրն է, որտեղ մասնակիցները նախապատրաստական և իրականացման ընթացքում կիրառում են իրենց կարողությունները, հմտությունները, գիտելիքները: Սաները քայլ առ քայլ, անկաշկանդ միջավայրում, ամենօրյա արդյունավետ գործունեությամբ, լիիրավ մասնակցությամբ, կարողություններ և հմտություններ ձեռք բերելով ու փոխանցելով, յուրացնում են ծեսը: Կենդանի, ազատ միջավայրում, առանց սցենարով գրված, անգիր արած տեքստի, խաղարկում են ծիսական գործողությունները՝ երգելով, պարելով, խաղալով, ինքնադրսևորվելով, տեղում իրենց ստեղծած ազատ տեքստով ներկայացնելով, իրացնելով իրենց կարողությունները, հմտությունները, գիտելիքները: Ծիսական միջավայրում կատարում են նախօրոք ուսուցանված երգերը, պարերը, մասնակիցներն ազատ են իրենց ստեղծականության մեջ: Կազմակերպման այս ձևը ստեղծագործականության և ինքնադրսևորման լայն հնարավորություն է տալիս:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Խառատյան-Առաքելյան Հ., Հայ ժողովրդական տոներ, Ե., 2005, էջ 321:
2. Մկրտչյան Ս., Տոներ. Հայկական ժողովրդական ծեսեր, սովորույթներ, հավատալիքներ (ավանդույթ և արդիականություն), Ե., 2010, էջ 101:
3. Քաջբերունի, Հայկական սովորույթներ [Ազգագրական հանդես (այսուհետև՝ ԱՀ), գ. 7-8, Թ., 1901, էջ 168]:
4. Նահապետյան Ռ., Աղձնիքահայերի ընտանիքը և ընտանեկան ծիսակարգը, Ե.,2004
5. Ионин Л. Г. Социология культуры, М., 2004, с. 166
6. Кагаров Е. Г. Культ фетишей и животных в Древней Греции, СПб.,913